Արձանագրություն N 4
ՄՄԾ ԷԱՃԱՊՁԲ-24/17 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 23 հունվարի 2024թ
ժամը 11:30

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Սողոմոն Մաթևոսյանը
անդամներ՝ Հասմիկ Ղուլյանը, Վարդան Ֆրանգուլյանը
քարտուղար՝ Գ. Ջանջուղազյան

օրակարգ 1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 19.01.2024թ. թիվ 03/26-1/976-2024թ գրությամբ ներկայացված էլեկտրոնային աճուրդի համակարգի խափանման պատճառով 09/01/2024թ. ժամը 10:30:17-ից մինչև ժամը 10:34:51-ը, 10/01/2024թ. ժամը 09:07:01-ից մինչև ժամը 09:11:59-ը և ժամը 12:29:00-ից մինչև ժամը 12:33:16-ը ընկած ժամանակահատվածում անցկացված որոշ աճուրդների (խափանված չափաբաժինների մասով) խափանված ընթացակարգերի վերաբերյալ գրության հարցի քննարկում:
2. Գրությամբ նշված չափաբաժինների մասով ՄՄԾ ԷԱՃԱՊՁԲ-24/17 ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին:

I. գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին

(Սողոմոն Մաթևոսյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.

ՀՀ ֆինանսների նախարարությունը 19.01.2024թ. թիվ 03/26-1/976-2024թ գրությամբ հայտնում է, որ 09/01/2024թ. ժամը 10:30:17-ից մինչև ժամը 10:34:51-ը, 10/01/2024թ. ժամը 09:07:01-ից մինչև ժամը 09:11:59-ը և ժամը 12:29:00-ից մինչև ժամը 12:33:16-ը ընկած ժամանակահատվածում էլեկտրոնային աճուրդի համակարգը աշխատել է խափանումներով, ինչի արդյունքում խոչընդոտվել է նշված ժամանակահատվածում էլեկտրոնային աճուրդների բնականոն ընթացքը:

ՄՄԾ ԷԱՃԱՊՁԲ-24/17 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանված 2024թ. հունվարի 8-ի ժամը 10:30-ն, հակադարձ աճուրդի օրն է՝ 2024-01-09 ժամը 10:30:00:

1.1. Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության գրությունը, ղեկավարվելով հրավերով և ՀՀ կառավարության 02/05/2019թ. N 516-Ն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջներով, որոշեց.

ա) ՄՄԾ ԷԱՃԱՊՁԲ-24/17 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին, 2-րդ, 3-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

Հանձնաժողովի

նախագահ _____ Սողոմոն Մաթևոսյան

անդամներ՝ _____ Հասմիկ Ղուլյան

_____ Վարդան Ֆրանգուլյանը

քարտուղար՝ _____ Գ. Ջանջուղազյան